դուրս արեց Խփչաղներին և Խազիրներին, և մնաց այն տեղ վեց ամիս։

Նա տեսաւ քաղաքի պատերը հաւասարեցրած հողին և Նարինջ—Կալայի պատերը քար ու քանդ եղած. ուստի հրամայեց կանչել Ռումից և Իրանից 300 փորձուած վարպետներ և 100 մշակ՝ ամուր քարեր կոտրելու համար, որ երկու ամուր և ժանիքով պատեր շինեն 40 ամրոցներով՝ սկսելով Նարինջ—Կալայի պատից մինչեւ ծովը։ Բացի այդ՝ հրամայեց շինել 14 մանր ամրոցներ Նարինջ—Կալայի և Կազիկիմիքի սարերի տարածութեան վրայ. Նուշրիվանի հրամանը կատարուեց չորս տարում. Շահի համար շինուեց բարձր պալատ՝ Նարինջ—Կալայի մէջ տեղում։ Նուշիրվանի Դարբանտ գտնուած ժամանակը՝ նորա մօտ եկաւ Արաբիայի Զիէզէնայ էմիրի որդի Սէյֆը օգնութիւն խնդրելու Մէսրուկայ որդի Իբրահիմ շահի դէմ . . . Նուշիրվանը տուեց նրան զօրք, որով և կարողացաւ վերադարձնել իւր հայրենի ժառանգութիւնը։

Մեր մարգարէ Մահեմուտը ծնուեց Նուշրվանի օրով . . . Նորա ծնունդը վերագրում են 544 թուին Յիսուսի Քրիստոսի յարութիւնից յետոյ . . , ։

ԺԱ. 8. 9. «79 թուի Հէջրէթի Աբդուլ մէլիք իբն Միրվան երկրորդ Բէնիումի խալիֆներից տիրում էր բոլոր Արաբիային և Էջամին. ուղարկեց անհաշիւ զօրք առաջնորդութեամբ իւր եղբօր Աբու Մուսալիմի Խազիրների և Դաղստանցիների վրայ, յանձնելով նրան մեծ գումար Դարբանդում մէջիդ շինելու համար։ Աբի Մուսալիմ երկու տարուայ ընթացքում շինեց քաղաքի կեդրոնում ընդարձակ մէջիդ 80 սիւների վրայ՝ բարձր գմբէթով, որի նման մէջիդ չկար ոչ Ֆարսում, ոչ Ատրբէջանում, ոչ Էրակում, և ոչ էլ Խորասանում։

Դարբանդից Աբու Մուսալիմը գնաց Դաղստանի բնակիչներին պատժելու աւազակութեան համար, և սրի օգնութեամբ կարողացաւ մի քանիսին դարձնել մահմետական կրօնի։ 770 թուին՝ ժամանակով վնասուած Դարբանդի դրան կամարը նորոգեց Էֆրիրուզից իբն Թէխմուզ, և այդ տեսնվում է կամարի վրայի արձանագրութիւնից։